Արձանագրություն

Մայիսյան համայնքի ղեկավարի 2011 թվականի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվությունից :

Նախագահությամբ՝ Մ. Աբգարյանի
Քարտուղարությամբ՝ Վ. Հարությունյանի

Հաշվետու ժողովին մասնակցում էին համայնքի թվով 67 բնակիչներ և մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ՝ Ա. Այվազյանը:

Օրակարգում

Համայնքի ղեկավարի 2011թվականի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների մասին

Զեկ. համայնքի ղեկավար՝ Ե. Մովսիսյան

Հարգելի համագյուղացիներ , հարգելի պարոն Այվազյան Մայիսյան համայնքում 2011 թվականի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքները կատարվել են բյուջեի եկամուտների հաշվին, որը կազմում է շուրջ 36 միլիոն:

Վաղ գարնանը գյուղապետարանի կողմից 15 օրյա ժամկետում կատարվել է մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումներ 250 հա սեփականաշնորհված և տնամերձ հողակտորներում, որի համար օգտագործվել է «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի շրջանակներում մարզպետարանի կողմից անհատույց ստացված 31 կգ ցինկի ֆոսֆիդի մկնասպան պրեպարատը:

Համայնքում սանիտարահիգենիկ մաքրությունը միշտ եղել է առաջնակարգ խնդիրը, որի համար կատարվել է աղբաթափման և աղբահեռացման աշխատանքներ՝ ծախսելով շուրջ 500.000 դրամ:

Ձմռան ցրտի և անձրևների հետևանքով քայքայվել է համայնքի գյուղամիջյան ասֆալտապատ ճանապարհները, սակայն համապատասխան գումար չունենալով, հնարավոր չէ այն նորից ասֆալտապատել, գյուղապետարանը իր հնարավորության սահմաններում կատարել է փողոցների ավազապատման և հարթեցման աշխատանքներ՝ ծախսելով 1 միլիոն դրամ:

Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է միշտ եղել երեխաների կրթության ինչպես նաև առողջության ապահովումը: 1994 թվականի հրդեհի պատճառով համայնքի 8 ընտանիքներ գտնվելով անօթևան վիճակում, համայնքի ղեկավարի որոշմամբ նրանք տեղավորվեցին մանկապարտեզում , որի համար չի գործում մանկապարտեզը:

Հարգելի համագյուղացիներ ի ուրախություն բոլորիս Արմավիրի մարզպետ պարոն՝ Ա. Ղահրամանյանի աջակցությամբ «Նախաձեռնություն հանուն երեխայի կրթության և առողջության» ծրագրի շրջանակներում համայնքում բացվեց դպրոցին կից նախադպրոցական հաստատություն՝ երկու աշխատատեղով, որտեղ հաճախում են 4-6 տարեկան 30 երեխաներ:
Գյուղապետարանը տվյալ կրթական օջախի համար կատարել է 1 միլիոն 991 հազար դրամ ներդրում:
Մայիսյան համայնքից 2 կմ հեռավորության վրա է գտնվում Ծառաշեն թաղամասը , որտեղից 64 երեխաներ, որոնք ձյան և անձրևի ժամանակ ոտքով հաճախում են Մայիսյանի միջնակարգ դպրոցը այդ պատճառով գյուղապետարանը իր միջոցների հաշվին հնարավորություն է ստեղծել երեխաներին անվճար օգտվելու տրանսպորտային միջոցից, ինչպես նաև ապահովել է տրանսպորտով՝ Երևան քաղաքում մասնակցելու «Հայ ասպետ» ծրագրին:
Համայնքում մեծ շուքով նշվել է Հայրենական մեծ պատերազմի և Շուշիի ազատագրման տոնակատարությունը, որտեղ մասնակցում էին համայնքի բնակչությունը և հյուրեր:
Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում են գտնվում միայնակ թոշակառուները, բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող 12 ուսանողներին տրանսպորտային ծախսերի համար տրվել է 360.000 դրամ դրամական օգնություն և 5 լավագույն սպորտսմեններին տրվել է խրախուսանք 100.000 դրամ գումար:
Հարգելի համագյուղացիներ իմ կարևորագույն աշխատանքներից է համարվում մշտապես հետևել և նպաստել համայնքում ոռոգվող ջրի մատակարարմանը:
Համայնքում գյուղապետարանի միջոցների հաշվին վերանորոգվել է տնամերձ հողամասերի ոռոգման խողովակները , որից օգտվում են 60 ընտանիքներ և տվյալ աշխատանքների համար ծախսելով 150.000 դրամ:
Համայնքում դեռ մնում է չլուծված 14 հա տնամերձ հողամասերի լիովին ոռոգման ջրի հարցը, սակայն ունենալով պայմանավորվածություն Արմավիր ՋՕԸ-ի հետ մինչև տարեվերջ կստանա համապատասխան լուծում՝ ապահովելով ոռոգվող ջրի ջրամատակարարումը;
Համայնքում խմելու ջուրը ապահովում և սպասարկում է «Նոր Ակունք» ՓԲԸ-ը, մատակարարելով 13 ժամյա ջրամատակարարում , սակայն շուրջօրյա մատակարարելու համար ավագանու որոշմամբ կատարվել է համայնքի կողմից ներդրում ՝ հին խողովակները նորով փոխարինելու , որը կնպաստի համայնքում շուրջօրյա ջրամատակարարումը:
1-ին կիսամյակում բյուջեի եկամուտները կազմում է՝
հողի հարկի գանձումներ՝ 60.3%
գույքահարկի գանձումներ՝ 82.9%

Ավարտելով զեկույցը՝ ցանկանալով համայնքի բնակչությանը բերքառատ տարի և անկորուստ բերքահավաք, որից և կախված է բնակչության բարեկեցիկ կյանքը:
Ելույթ ունեցան Հ. Միդոյանը, Հ. Հակոբյանը, Հ. Մելքոնյանը, որոնք համայնքի ղեկավարի 2011թվականի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքները գնահատեցին բավարար:
Ելույթ ունենալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ՝ Ա. Այվազյանը կատարված աշխատանքները գնահատեց բավարար :

Համայնքի հիմնախնդիրները

1. 30 հա տնամերձ հողամասերի համար խորքային հորի վերանորոգում
2. Մանկապարտեզի շենքի վերանորոգում
3. Գյուղամիջյան ճանապարհների անմխիթար վիճակը
4. Մշակույթի տան վերանորոգում

Հանձնաժողովի

նախագահ՝ Մ. Աբգարյան

քարտուղար՝ Գ. Հարությունյան